ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/33, 20.05.2019թ.

Բողոք բերող անձ՝ <<Արարատ-ՃանՇին>> ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» հրատապ բաց մրցույթ

Գնման առարկան՝ Շինարարական աշխատանքներ

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» հրատապ բաց մրցույթ հանձնաժողովի կողմից 14 մայիսի 2019թ.-ի 5 արձանագրությամբ ընկերությանը մերժելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոքաբեր <<ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ից

Գ. Ավշար, Արարատ-Վեդի ա/ճ

Պատվիրատու ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

Ք. Երևան, Վ. Սարգսյան 3/3

Գնման ընթացակարգի ծածկագիրը, առարկան <<ՏԿՏՏՆ-ՀՄԲԱԾՁԲ-2019/4Շ>>

Հրատապ բաց մրցույթ,

Շինարարական աշխատանքներ

Դիմում/Բողոք

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից, որը գտնվում է Վ. Սարգսյան 3/3 հասցեում կազմակերպվել է շինարարական-ասֆալտապատման աշխատանքների մրցույթ:

Մեր կազմակերպությունը ունենալով բավականին մեծ տորձ տվյալ ոլորտում ցանկացել է և մասնակցել է մրցույթին:

Մրցույթի առաջին փուլից հետո պարզվել է, որ մեր կազմակերպությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Մրցույթի հանձնաժողովի որոշել է հարցում անել ՀՀ ՊԵԿ, որպեսզի պարզի, թե մեր ընկերությունը ունի ժամկետանց պարտքեր թե ոչ, և պարզի ընկերության նախորդ երեք տարվա շրջանառությունը բավարարում է թե ոչ:

Ըստ մրցույթի հանձնաժողովի ստացվել է ՊԵԿ պատասխանը այ մասին, թե իբր ընկերությունը ունի ժամկենաց պարտքեր հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով:

Մենք ցանկանում ենք հավաստել, որ հնարավոր չէ ընկերությունը ունենա պարտավորություն, դեռ ավելին, ունի գերավճարներ:

Որպես նշվածի մասին ապացույց, կցում ենք տեղեկանքների պատճենները:

Խնդրում ենք մեր բողոքին ընթացք տալ, <<ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ին ճանաչել հաղթող մասնակից՝ որպեսզի վերականգնվի մեր իրավունքը, քանի որ մեր գինը եղել է նշված գնային առաջարկներից նվազագույնը:

Կից ներկայացնում եմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի, ՊԵԿ-ի տեղեկանքի պատճենը և բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը:

Առդիր՝ 3 թերթ:

<<ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ի տնօրեն Ս. Վարդանյան

16.05.2019թ.

093556713

g.gevorgyan@ararat-chanshin.am

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

N 05-22/07-13

16.05.19

Սկան

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
Պարոն Լ. Օհանյանին
Բողոքաբեր <<ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ից
Գ. Ավշար, Արարատ-Վեդի ա/ճ
Պատվիրատու ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վ. Սարգսյան 3/3
Գնման ընթացակարգի ծածկագիրը, առարկան <<ՏԿՏՏՆ-ՀՄԲԱՇՁԲ-2019/4Շ>>
Հրատապ բաց մրցույթ,
Շինարարական աշխատանքներ

Բողոքի լրացում

Ի պատասխան Ձեր 20.05.2019թ. բողոքը վերադարձնելու և այն շտկելու մասին գրության ստորև ներկայացնում ենք հետևյալ լրացումները.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից, որը գտնվում է Վ. Սարգսյան 3/3 հասցեում կազմակերպվել է շինարարական-ասֆալտապատման աշխատանքների մրցույթ:

Մեր կազմակերպությունը ունենալով բավականին մեծ փորձ տվյալ ոլորտում ցանկացել է և մասնակցել է մրցույթին:

Մրցույթի առաջին փուլից հետո պարզվել է, որ մեր կազմակերպությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Մրցույթի հանձնաժողովի որոշել է հարցում անել ՀՀ ՊԵԿ, որպեսզի պարզի, թե մեր ընկերությունը ունի ժամկետանց պարտքեր թե ոչ, և պարզի ընկերության նախորդ երեք տարվա շրջանառությունը բավարարում է թե ոչ:

Ըստ մրցույթի հանձնաժողովի ստացվել է ՊԵԿ պատասխանը այ մասին, թե իբր ընկերությունը ունի ժամկենաց պարտքեր հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով:

Մենք ցանկանում ենք հավաստել, որ հնարավոր չէ ընկերությունը ունենա պարտավորություն, դեռ ավելին, ունի գերավճարներ:

Որպես բողոքի իրավական հիմք ցանկանում եմ նշել, որ խախտվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 3, 6, 7 և 34 հոդվածների պահանջները, քանի որ ընկերությունը առանց իրազեկված լինելու այն մասին որ ունի պարտք՝ դրոշմանիշայն, հայտ է ներկայացրել և մասնակցել է մրցույթինL

Խնդրում ենք մեր բողոքին ընթացք տալ, դադարեցնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության <<ՏԿՏՏՆ-ՀՄԲԱՇՁԲ-2019/4Շ>> Հրատապ բաց մրցույթ հանձնաժողովի կողմից 14. Մայիսի 2019թ. N 5 արձանագրությամբ ընկերությանը մերժելու մասին որոշումը:

Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը ներկայացվել է սկզբնական բողոքի հետ:

<<ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ>> ՍՊԸ-ի տնօրեն Ս. Վարդանյան

20.05.2019թ.

093556713

g.gevorgyan@ararat-chanshin.am

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՍՏԻՖ N 22581
20.05.19թ.